ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/09

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Գարդմեն» ՍՊԸ-ի 25.01.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Գարդմեն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գարդմեն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 25.01.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի առարկան և փաստացի հիմքերը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ծխախոտի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ

հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Նույն հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվում է համաձայն թիվ 5 հավելվածի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ ընկերությունների հայտ է ներկայացրել նաև «Գարդմեն» ՍՊԸ-ն:

«Գարդմեն» ՍՊԸ-ն թիվ 5 հավելվածով՝ գնային առաջարկով՝ առանձնացված տողով նախատեսել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ավելացված արժեքի հարկ գծով վճարվելիք գումարի չափը և մյուս մասնակիցների համեմատ վերջինիս գնային առաջարկը եղել է նվազագույնը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.01.2018թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Գարդմեն» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի որոշմամբ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը մերժվել է, քանի որ գնման առարկան (ծխախոտ) չի հարկվում ԱԱՀ-ով, իսկ գնային առաջարկը ներկայացվել է ԱԱՀ-ն ներառյալ:

Նույն արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Ա/Ձ Կարեն Սարգսյանին, իսկ 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

Բողոքի իրավական հիմքերը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների

թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց նույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց նույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Նույն հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվում է համաձայն թիվ 5 հավելվածի: Գնային առաջարկը ներկայացվում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և

ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Բողոքի պահանջը և ապացույցները.

Այսպիսով, «Գարդմեն» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուն Ընկերության հայտը մերժելով գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Գարդմեն» ՍՊԸ-ն գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքը (ծխախոտ) ներմուծում է այլ երկրից, իսկ տվյալ ապրանքի մասով ներմուծման ժամանակ պարտադիր վճարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ-ն: Այդ պատճառով, ինչպես նաև հաշի առնելով Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետը և 2-րդ մասի 2-րդ կետի 3-րդ ենթակետը, թիվ 5 հավելվածով՝ գնային առաջարկով՝ առանձնացված տողով նախատեսել է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ավելացված արժեքի հարկի գծով վճարվելիք գումարի չափը, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով և բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, իսկ տվյալ դեպքում հրավերով հստակ սահմանվել է մասնակցի կողմից ԱԱՀ-ի վճարման կարգը: Բացի այդ, Պատվիրատուն Ընկերության հայտը մերժելով չի նշել թե ինչ իրավական ակտով է կարգավորված վերջինիս կողմից հայտի մերժման հիմք հանդիսացած ապրանքի ԱԱՀ-ով չհարկվելը, և արդյոք տվյալ ապրանքը ներմուծելու կամ արտադրելու համար ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում ԱԱՀ-ի վճար: Տվյալ պարագայում, քանի որ «Գարդմեն» ՍՊԸ-ն հանդիսանում է ԱԱՀ վճարող և ծխախոտ ներմուծելիս պարտադիր պետք է վճարի ԱԱՀ, ուստի տվյալ պարագայում Ընկերությունը հայտով ներկայացված գնային առաջարկով առանձնացված տողով նախատեսել է ՀՀ պետական բյուջե ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումարի չափը:

Ելնելով վերոգրյալ իրավական և փաստական հանգամանքներից՝ գտնում ենք, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետով սահմանված պահանջները»:

Ամփոփելով վերոգրյալը՝ «Գարդմեն» ՍՊԸ-ն Խորհրդին խնդրել է.

1. Դարարեցնել և/կամ չեղյալ հայտարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. թիվ 2 արձանագրության 2-րդ կետով կայացված՝ «Գարդմեն» ՍՊԸ-ի հայտը

ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանող հայտ ճանաչելու մասին որոշումը.

2. Դարարեցնել և/կամ չեղյալ հայտարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Գարդմեն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

3. Դարարեցնել և/կամ չեղյալ հայտարարել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. թիվ 2 արձանագրության 6-րդ կետով կայացված՝ Ա/Ձ Կարեն Սարգսյանին 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու, 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին որոշումները և նույն որոշումից բխող բոլոր այլ որոշումները:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

2. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու«Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկ ներկայացվել է թվով չորս ընկերությունների, այդ թվում «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից, իսկ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում՝ թվով 2 ընկերությունների, այդ թվում՝ «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից: Ընդ որում միայն «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկն է ներկայացվել ԱԱՀ-ով: Գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների ներկայացրած գնային առաջարկների ուսումնասիրության ընթացքում հաշվի է առնվել, որ ծխախոտից արտադրանքը համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 87-րդ հոդվածի 5-րդ կետի և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի հարկվում է ակցիզային հարկով: Ծխախոտից արտադրանքը հարկվում է ԱԱՀ-ով միայն ներմուծման դեպքում և

ներմուծման ժամանակ վճարված ԱԱՀ-ն ենթակա է վերադարձի ներմուծված ծխախոտի իրացման պահից:

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետով սահմանվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Գնահատող հանձնաժողովի գնահատմամբ «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից ԱԱՀ-ն պետք է վճարվի ոչ թե տվյալ գործարքի (գնման ընթացակարգերի և դրանց արդյունքում կնքված գնման պայմանագրերի), այլ մեկ այլ՝ ծխախոտի ներմուծման գործարքի շրջանակներում: Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի արդյունքում գնման պայմանագրի կնքման պահից ներմուծող ընկերությանը անմիջապես վերադարձվում է ներմուծման պահին վճարված ԱԱՀ-ն ամբողջությամբ, իսկ Նախարարության և պայմանագրի կողմ հանդիսացող ցանկացած ընկերության միջև իրավահարաբերությունները կարող են լինել միայն գնորդ-վաճառող իրավահարաբերություններ, որտեղ ծխախոտի ներմուծման գործարքը որևէ պարագայում ներառվել չի կարող, իսկ ծխախոտի վաճառքը հարկվում է միայն ակցիզային հարկով:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Նախարարության կողմից 2017թ. կազմակերպված մեկ այլ գնման ընթացակարգի շրջանակներում ծագած նմանատիպ խնդրի (գնման առարկան ազատված էր ԱԱՀ-ից, սակայն ներմուծման ժամանակ ենթակա էր ԱԱՀ-ով հարկման) կապակցությամբ պարզաբանում ստանալու նպատակով Նախարարությունը դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի կողմից 09.03.2017թ. թիվ 06/3-1/7588-17 գրությամբ ստացվել է հետևյալ պարզաբանումը.

«Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ գրությամբ նշված դեպքում գնման ընթացակարգի շրջանակներում 940290000 ապրանքային դիրքին դասվող առաջարկվող ապրանքները (բժշկական մահճակալ, բժշկական մահճակալի ներքնակ, շարժական սեղան և աթոռ լվացվող մակերեսով) բժշկական նշանակության են, ուստի այդ ապրանքների մասով

գնային առաջարկում չպետք է ներառվեր ԱԱՀ: Իսկ 871310000 ապրանքային դիրքին դասվող առաջարկվող ապրանքը, եթե հաշմանդամության սայլակ է, ապա այդ ապրանքի մասով ևս գնային առաջարկում չպետք է ներառվի ԱԱՀ գումարը» :

Հաշվի առնելով վերոգրյալը գտնում ենք, որ «Գարդմեն» ՍՊԸ բողոքը իրավաչափ չէ և ենթակա է մերժման»:

Խորհրդի նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Կարեն Բաբախանյանը և Լիլիթ Գասպարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի հրավերները (այսուհետ՝ նաև Հրավերներ), «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.01.2018թ. հայտերի բացման նիստերի N 2 արձանագրությունները, «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ծխախոտի ձեռքբերման նպատակով կազմակերպվել են «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերը (այսուհետ՝ նաև Ընթացակարգեր), որոնց մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել «Գարդմեն» ՍՊԸ-ն:

Հաանձնաժողովի 22.01.2018թ. հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Գարդմեն» ՍՊԸ-ի հայտի N 5 հավելվածով ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 7,819,095,00 ՀՀ դրամ (գնի առաջարկ ներառյալ ԱԱՀ), որից ավելացված արժեքի հարկի գումարը կազմել է 1,303,182,50 ՀՀ դրամ:

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում՝ 1-ին չափաբաժնի համար Ընկերության առաջարկած ընդհանուր գինը կազմել է 3,153,537,00 ՀՀ դրամ (գնի առաջարկ ներառյալ ԱԱՀ), որից ավելացված արժեքի

հարկի գումարը կազմել է 52,589,50 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի համար՝ 297,198,00 ՀՀ դրամ (գնի առաջարկ ներառյալ ԱԱՀ), որից ավելացված արժեքի հարկի գումարը կազմել է 49,533,00 ՀՀ դրամ :

Ընթացակարգերի հայտերի բացման նիստերի արձանագրությունների 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկները մերժել այն հիմնավորմամբ, որ գնման առարկան (ծխախոտը) չի հարկվում ԱԱՀ-ով, իսկ Ընկերության գնային առաջարկները ներկայացվել են ԱԱՀ-ն ներառյալ:

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրության 6-րդ կետով որոշել է 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Ա/Ձ Կարեն Սարգսյանին, իսկ 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած:

«Գարդմեն» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը գնային առաջարկով առանձնացված տողով նախատեսել է Հայաստանի Հանրապետության ՀՀ պետական բյուջե ավելացված արժեքի հարկի գծով վճարվելիք գումարը, ընդ որում, մյուս մասնակիցների համեմատ վերջինիս գնային առաջարկը եղել է նվազագույնը: Ընկերությունն իր անհամաձայնությունն է հայտնել Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելու Հանձնաժողովի որոշման կապակցությամբ, և ներկայացրել է հիշյալ որոշումը վիճարկող փաստարկներ: Մասնավորապես, ըստ Ընկերության, Պատվիրատուն Ընկերության հայտը մերժելով գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Գարդմեն» ՍՊԸ-ն գնման առարկա հանդիսացող ապրանքը (ծխախոտը) ներմուծել է այլ երկրից, իսկ նշված ապրանքի մասով ներմուծման ժամանակ պարտադիր վճարվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ավելացված արժեքի հարկը: Ամփոփելով նշվածը, Ընկերությունը գտնում է, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկը համապատասխանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին և ենթակա չէր մերժման:

Բողոքի քննության նպատակով 31.01.2018թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն պնդեց այն փաստը, որ «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելու որոշումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Ընկերությունը իր կողմից ներկայացված գնային առաջարկներում առանձին տողով նախատեսել է ԱԱՀ-ի բաղադրիչ, ինչը Հանձնաժողովի գնահատմամբ չի համապատասխանել իրականությանը, քանի որ Ընկերության կողմից ԱԱՀ-ի վճարման պայմանը վերաբերել է ոչ թե Ընթացակարգի շրջանակներում կնքվող պայմանագրի, այլ մեկ այլ՝ ծխախոտի ներմուծման գործարքին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի հրավերների 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ

գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 58-րդ հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների և (կամ) գործառնությունների իրականացման համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ չհաշվարկելն է:

Բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով Խորհուրդը 08.02.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տալ եզրակացություն այն մասին, արդյո՞ք Ընկերությունը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, թե՝ ոչ:

Ի պատասխան Խորհրդի վերը նշված հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.02.2018թ. թիվ 06/3-1/8982-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 27-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում է ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող հարկ վճարողների կողմից ծխախոտի արտադրանքի օտարումը:

Ծխախոտի արտադրանքի օտարումը Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկման ենթակա է, եթե այն օտարվում է՝

- ծխախոտի արտադրանք արտադրողի կողմից, կամ
- ծխախոտի արտադրանք ներմուծողի կողմից:

Ծխախոտի արտադրանքի օտարման մասով ԱԱՀ-ով հարկման հետ կապված նույն կարգավորումները սահմանված էին նաև մինչև 01.01.2018թ. գործող «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով:

Միաժամանակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը տեղեկացրել է նաև, որ «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից հարկային մարմին չեն ներկայացվել ծխախոտի արտադրանք արտադրող համարվելը կամ ծխախոտի արտադրանք ներմուծող համարվելը հավաստող հաշվարկներ, հայտարարագրեր:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներում ներառվել է ավելացված արժեքի հարկի բաղադրիչ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Բողոքի քննության շրջանակներում Ընկերության կողմից վերջինիս՝ ծխախոտի արտադրանք ներմուծող հանդիսանալու փաստը ապացուցող որևէ փաստաթուղթ Խորհրդին չի ներկայացվել:

Խորհուրդը գտնում է, որ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Ե» և «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/4-Գ» ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի շրջանակներում կնքելիք պայմանագրի առական չի հանդիսանում ծխախոտի արտադրանքի ներմուծման կամ ծխախոտի արտադրանքի արտադրման գործարք:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ «Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը մերժելով՝ գործել է իրավաչափ, քանի որ վերջինս հայտերով ներկայացված գնային առաջարկներում ավելացված արժեքի հարկի բաղադրիչ ներառելով՝ խախտել է ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 27-րդ կետով, Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 1-ին մասի 5-րդ կետի 5.2 ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց .

«Գարդմեն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**